| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 14 | Հոկտեմբեր | 2019 թ. |
| [4] Մատուցման ամսաթիվը | | |
| 14 | Հոկտեմբեր | 2019 թ. |

# Հաշիվ վավերագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 9985530781 |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | 14 Հոկտեմբեր, 2019 թ. | Բ9985530781 |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 0 1 2 4 1 0 5 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [10] Անվանումը | «ՖԻՆԼՈՌ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [11] Բանկային տվյալները | ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ — N 2474602078940000 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834 |
| [18] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |

| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| NN Ը/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (թվանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ ժամանակահատվածը քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 20116216 | րոպե | 3495 | 83.33 | | 291238.35 |
| 2 | իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-արաբերեն-հայերեն քր. գործ թիվ 12120616 | րոպե | 4365 | 125 | | 545625 |
| 3 | իրավաբանական գրավոր թարգմանություն հայերեն-արաբերեն-հայերեն քր. գործ թիվ 12120616 | նիշ | 295432 | 3.06 | | 904021.92 |
| 4 | իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 20117316 | րոպե | 5000 | 83.33 | | 416650 |
| 5 | իրավաբանական գրավոր թարգմանություն ռուսերենից հայերեն քր. գործ թիվ 20117316 | նիշ | 282032 | 1.39 | | 392024.48 |
| 6 | իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 10121916 | րոպե | 1770 | 83.33 | | 147494.1 |
| 7 | իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 12129716 | րոպե | 2725 | 83.33 | | 227074.25 |
| 8 | իրավաբանական գրավոր թարգմանություն հայերենից ռուսերեն քր. գործ թիվ 12129716 | նիշ | 273898 | 1.39 | | 380718.22 |
| Ընդամենը | | | | | | 3304846.32 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ SHAHINYAN VARDUHI 7803710425

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

14/10/2019 16:43:37

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

# ՈՐՈՇՈՒՄ
# ԹԱՐԳՄԱՆԻՉ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

« 23 » ապրիլի 2016թ.

ք.Աբովյան

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Հ.Ասրյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 20116216 քրեական գործի նյութերը,

## ՊԱՐԶԵՑԻ

2016 ապրիլի 22-ին ժամը 23:40-ին Երևան քաղաքի «Միքայելյան» ԲԿ-ից ոստիկանության Կոտայքի բաժին հաղորդում է ստացվել այն մասին, որ Կոտայքի մարզի Պտղնի գյուղում` Երևան-Սևան մայրուղում 10 կմ հատվածում գտնվող «Կոտայք» ռեստորանային համալիրից իրենց մոտ են տեղափոխվել Նահապետ Միհրի Վարդանյանը` կործքավանդակի ձախ կեսի հետին պատի ծակած-կտրած թափանցող վերքի հեմոպնևմոթորաքսի և Միեր Նահապետի Վարդանյանը` գլխի գագաթային շրջանի և որովայնի առաջային հատվածի կտրած-ծակած վերքի ախտորոշումներով:

Դեպքի առթիվ 23.04.2016թ-ին ՀՀ ՔԿ Աբովյանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 20116216 քրեական գործը:

Նկատի ունենալով, որ գործով վկա Արսեն Արամայիսի Արսենյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է քրեական գործով հրավիրել թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 83 և 89 հոդվածներով

## ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 20116216 քրեական գործով թարգմանիչ հրավիրել «Ֆինլոու» ՍՊ ընկերության իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 03 Ա918486, գրանցման համարը` 264.110.768486 կողմից լիազորված թարգմանիչ Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին / անձնագիր AM 0552160, տրված 07.12.2011թ-ին 053-ի կողմից, հաշվառված ՀՀ, քաղաք ստեփանավան, Մ.Պապյան փողոց տուն 4, ով տիրապետում է հայերեն, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին:
2. Թարգմանիչ Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին բացատրել ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338-339 հոդ. հոդ. նախատեսված քր. պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ` Հ.Ասրյան

Ինձ բացատրված է որպես թարգմանիչ իմ իրավունքներն ու պարտականությունները: Միաժամանակ ակնհայտ սուտ թարգմանության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ` Գ.Շիրմազանյան

11

ՈՐՈՇՈՒՄ
Թարգմանիչ հրավիրելու մասին

19-ը մայիսի 2016թ. քաղաք Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության մայոր Ա.Հ.Կարապետյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 12120616 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ՝

2016 թվականի ապրիլի 25-ին Իսրայելի Հանրապետության քաղաքացի Աթիա Բասամի Էբեն Համադին ոստիկանության Էրեբունու բաժին հաղորդում է տվել այն մասին, որ 2016 թվականի մարտ ամսին իր ծանոթ Մուհաննադ Ալսուլթանն ընկերների՝ Մուրադ Ալումանի և ոմն Աշոտի հետ Երևան քաղաքի Թոխմախ թաղամասում գտնվող տներից մեկի դուռը փակել են իր վրա և բռնություն գործադրելով՝ ապօրինի զրկել են ազատությունից ու շուրջ 5 ժամ տևողությամբ պահել հիշյալ տանը: Բացի այդ, 2015 թվականի դեկտեմբեր ամսից Մուհաննադ Ալսուլթանը սպառնալիքներ տալով՝ իրենից պահանջել և պարբերաբար մաս-մաս վերցրել է 2000 ԱՄՆ դոլար գումար:

Հաղորդման կապակցությամբ ՀՀ քննչական կոմիտեի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 12120616 քրեական գործը:

Քրեական գործի քննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հարցաքննել Աթիա Բասամի Էբեն Համադիին, Մուհաննադ Ալսուլթանին և Մուֆակ Ալումանին, որոնք չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, ինչպես նաև թարգմանել քրեական գործում եղած արաբերեն փաստաթղթերը և լազերային կրիչներում առկա արաբերեն ձայնագրությունները:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտ է հարցաքննել Աթիա Բասամի Էբեն Համադիին, Մուհաննադ Ալսուլթանին և Մուֆակ Ալումանին, ինչպես նաև թարգմանել քրեական գործում եղած արաբերեն փաստաթղթերը և լազերային կրիչներում առկա արաբերեն ձայնագրությունները, իսկ Մարալ Մարտիրոսի Զաքարյանն ազատորեն տիրապետում հայերեն և արաբերեն լեզուներին, շահագրգռված չի գործի ելքով, ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Մարալ Մարտիրոսի Զաքարյանին /ծնված 07.11.1982թ., անձնագիր AN 0315451, բարձրագույն կրթությամբ, աշխատում է <<Ֆինլոու>> ՍՊ ընկերությունում՝ որպես թարգմանիչ/ հրավիրել որպես թարգմանիչ, նրան պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

12-13

2. Սույն որոշման մասին հայտնել Մ.Զաքարյանին և նրան պարզաբանել որպես թարգմանիչի՝ ՀՀ քր. դատ. օր. 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները:

Ավագ քննիչ՝ Ա.Հ.Կարապետյան

Որոշումը ինձ հայտնվել է, պարզաբանվել են որպես թարգմանիչի ՝ ՀՀ քր. դատ. օր. 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները :

Թարգմանիչ՝ Մ.Մ.Զաքարյան

Որոշումը հայտնեց և իրավունքներն ու պարտականություններ պարզաբանեց՝

Ավագ քննիչ՝ Ա.Հ.Կարապետյան

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

24 մայիսի 2016թ.                                                                 ք.Աբովյան

Կոտայքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, արդարադատության կապիտան Լ.Հակոբյանս, վերանայելով վարույթիս թիվ 20117316 քրեական գործի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի բնակիչ Ստեփան Ղազարի Ղազարյանը 13.04.2016թ-ին ՀՀ ոստիկանության ԿՀԴՊԳՎ հաղորդում է տվել այն մասին, որ իր եղբայր՝ Արզնի գյուղի բնակիչ Ռուստամ Ղազարի Ղազարյանը կեղծել է իր կնոջ՝ Լյուդմիլա Սողոմոնի Ղազարյանի աշխատանքային գրքույկը գրառում կատարելով, որ վերջինս երկար տարիներ աշխատել է Վրաստանի Ծալկայի շրջանի Չիֆթա-Քիլիսայի միջնակարգ դպրոցում որպես ուսուցչուհի, իսկ Լ. Ղազարյանը օգտագործելով կեղծ աշխատանքային գրքույկը սահմանված ժամկետից շուտ՝ 2010թվականին թոշակավորվել է և մինչ օրս ստանում է մանկավարժական թոշակ :

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ վկա Լյուդմիլա Ղազարյանը ունի ռուսական կրթություն և չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է քրեական գործով հրավիրել թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 20117316 քրեական գործով որպես թարգման ներգրավել «Ֆինլոու» ՍՊԸ-ի աշխատակից Անուշ Խանիկյանին, ով ունի բարձրագույն կրթություն, ավարտել է Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտը, ազատորեն տիրապետում է ինչպես ռուսերեն բանավոր և գրավոր, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության /հայերեն/ գրավոր և բանավոր լեզվին:
2. Անուշ Խանիկյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝                                        Լ.Հակոբյան

Ինձ բացատրված է որպես թարգմանիչ իմ իրավունքներն ու պարտականությունները: Միաժամանակ նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝                                        Ա. Խանիկյան

# ՈՐՈՇՈՒՄ

*Թիվ 10121916 քրեական գործով թարգման ներգրավելու մասին*

*« 02 » հունիսի 2016թ.* *ք.Երևան*

*ՀՀ ՔԿ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Ա.Ղազարյանս, քննարկելով վարույթումս քննվող թիվ 10121916 քրեական գործի նյութերը.*

## ՊԱՐԶԵՑԻ՝

*2016 թվականի մայիսի 18-ից՝ ժամը 16:00-ից մինչև նույն օրը՝ ժամը 17:00-ն ընկած ժամանակահատվածում, անհայտ անձը, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, տեխնիկական միջոցների գործադրմամբ, բացելով Տատյանա Վլադիմիրովնա Նարտովային պատկանող Երևան քաղաքի Հալաբյան 26-րդ շենքի 20-րդ բնակարանի մուտքի դռան փականները, ապօրինի մուտք է գործել ներս և այնտեղից գաղտնի հափշտակել 20.000 ՀՀ դրամ գումար՝ Տ.Նարտովային՝ պատճառելով զգալի չափի վնաս:*

*Դեպքի կապակցությամբ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում 2016 թվականի մայիսի 18-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 10121916 քրեական գործը:*

*Պարզվել է, որ տուժող Տատյանա Վլադիմիրովնա Նարտովան չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին:*

*Ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,*

## ՈՐՈՇԵՑԻ՝

*Սույն քրեական գործով որպես թարգման ներգրավել «ՖԻՆԼՈՒ» ՍՊԸ թարգմանչական գործակալության տնօրեն Վարդուհի Շահինյանին և միաժամանակ նրան ծանոթացնել սույն որոշմանը և պարզաբանել իր իրավունքները և պարտականությունները.*

*ավագ քննիչ՝* *Տ.Ա.Ղազարյան*

*Որոշման մասին ինձ ծանուցվել է, միաժամանակ պարզաբանվել են իմ իրավունքները և պարտականությունները, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:*

*Թարգման՝* Վ. Շահինյան

*«02» հունիսի 2016թ.*

16

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

24-ը հունիսի 2016թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության մայոր Ա.Հ.Կարապետյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 12129716 քրեական գործի նյութերը.

### Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Վարդան Մեսրոպի Հովհաննիսյանը Արմեն Մայիսի Ալամշարյանին և քննությամբ չպարզված այլ անձանց թմրամիջոց ապօրինի իրացնելու նպատակով Հակոբ Թելմանի Երանոսյանին է փոխանցել ութ փաթեթ՝ ընդհանուր խոշոր չափերի՝ 10,54 գրամ հաստատուն քաշով <<Մարիխուանա>> տեսակի թմրամիջոց, որից երկու փաթեթը՝ ընդհանուր զգալի չափերի՝ 2,53 գրամ քաշով թմրամիջոցը 2016 թվականի հունիսի 23-ին Հ.Երանոսյանը փոխադրել և Երևան քաղաքի Մ.Խորենացի փողոցում գործող <<Տաշիր>> առևտրի կենտրոնի դիմաց հանձնել է Ա.Ալամշարյանին: Նույն օրը վերջինս բերման է ենթարկվել ոստիկանության Էրեբունու բաժին, որտեղ նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է նշված թմրամիջոցը, իսկ Վ.Հովհաննիսյանի ապօրինի իրացրած մյուս՝ խոշոր չափերի՝ 8,01 գրամ հաստատուն քաշով <<Մարիխուանա>> տեսակի թմրամիջոցը նույն օրը հայտնաբերվել է Հակոբ Երանոսյանի կողմից վարած <<Օպել Աստրա Ջի>> մակնիշի 34 RT 887 համարանիշի ավտոմեքենայի զննությամբ:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 12129716 քրեական գործը:

Հունիսի 23-ին կասկածյալ Հակոբ Թելմանի Երանոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 38-266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցավոր արարք կատարելու կասկածանքով ձերբակալվել է և ուղարկվել պահվելու Երևան քաղաքի ՁՊՎ:

Քրեական գործի քննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես կասկածյալ հարցաքննել Հակոբ Երանոսյանին, ով չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտ է հարցաքննել Հակոբ Երանոսյանին, իսկ Գագիկ Ավետիքի Շիրմազանյանը ազատորեն տիրապետում հայերեն և ռուսերեն լեզուներին շահագրգռված չի գործի ելքով, ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քր դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածներով.

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին /ծնված 02.05.1954թ., անձնագիր AM 0552160 բարձրագույն կրթությամբ, աշխատում է «Ֆինլոու» ՍՊ ընկերությունում որպես թարգմանիչ/ հրավիրել որպես թարգմանիչ, նրան պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83-րդ

20-21